

իջաւ պարտէղ . . . սիրտն կը խոցուէր
երբ թոհաննան մըտքին բերէր .
իմ սիրելի , իմ աղաւնիկ ,
Մարիաննա , անբաղդ աղջիկ : —
կեցիր քիչ մը , . . . երգել ըսկաւ ,
Զայն յանտառին տարածուեցաւ .
Աչ կը իցիս՝ այլ Պետրուսիա
կողկողագին արձագանդ տայ . . .
Քիչ մը կ'երգէ , ու կանկ կ'առնէ ,
Մըտիկ կ'անէ , դարձեալ կ'երգէ ,
Զայնը յօդնած մեղմ կը մարի ,
Այլ Պետրիկէն ձայն ձուն չըկայ :
Նա՛ չի կը բներ . . . « Մարիաննա
« Ուր ես սէր իմ՝ եւ դուրս արի » —
Չը լսուիր ձայն , Պետրիկ չը կայ :
Այլ բնշ , միթէ ձըգել կարնայ ,
Սկյոճք աղջիկն յայն վիճակին : . .
Կեցիր նայինք . . . նյժն միշոցին
Լուսնեակ վերէն ի մութ յանտառ ,
Իրը յաւերժհարս կը նայի վար .
Մարիաննա կը թափառի .
Սկյոճքին երգը կը դադրի ,
Այլ գեռ սըրտանց սաստիկ կուլայ : —
Դարձիր մէկ մը խեղճին նայէ ,
Ով ապերսխտ , քօզաք Պետրէ : —
Յօդնի գաղրի Մարիաննա
Բայց յօդնելը նա շիմննար ,
Առանց Պետրիկ , ի դաշտ յանտառ .

1 Անուանի երգ , առհասարակ Փողաքաց ծա-
նօթ :

Մըլորելով թափառական ,
կ'անցընէ մութը գիշերուան :
Նոր արևելք կը կարմըրէին ,
Աստղեր ամէն կը ծածկուին .
Խոցուած սըրտով Մարիաննա
իրենց տունին կը մօտենայ ,
կը մըտնայներս , — մայրն քուն կ'ըլլայ , —
Խօլոր աչօքը նայելով
« Ա՛խ գիտնայիր , կ'ասէ , մարիկ ,
Թէ ինչպիսի դաժան օձով
Փաթթըւած է աղջկանդ սըրտիկ : »
Եւ յանկողին , խօպն ի բերան
կ'ինայ , ինչպէս ի գերեզման : . . .

Հոս կը դադրի բանաստեղծս , բայց
դեռ անկատար է կամ յախուռն կեր-
պով աւարտած այս սովորական բնու-
թեան տեսարանը , ամբողջ այս պատ-
մութեան մէջ չոմերական պարզու-
թիւն կը փայլի , քոպզարին օրիորդաց
հետ ըրած համառօտ խօսակցութիւնը
և խրատըն , անդարձ երիտասարդու-
թեան վերայ հառաջանքն , ամբողջ
պատմութեան բնական ընթացքն , և
ցաւալի կատարածն , միով բանիւ այս
երգն Մարիաննա՝ կրնայ նախագաղա-
փար համարուիլ Փոքր-Ծուսաց աղջա-
յին բանաստեղծութեան , և միւս եր-
գոց հետ ցոյց է մեծի հանճարոյ քեր-
թողին և անմահ ացուցիչ անուան թա-
ռաս Շեվենքոյի :

Հ. Գ. Գ.

Ա Ն Ա Ա Յ Ի Ւ

Թուղ զհայր քոյին և ըզմայր , մի լիցի քեզ տուն դադար .
Լեր առանձին . . . թող շիցըն ՚ի հոգւով քում բնաւ յամբայր
կիրք մարդկային . . . սուրբ լեր դու . . .
Առ քեզ երբէք հասցեն մի
Հըրնուանք գեղոյն աշխարհի ,
Սիրոյ , փառաց , հարցատութեան և զօրու .
Սիրոտ քոյ իցէ սուրբ ՚ի ծոցիդ . զիշճս նորուն
կարգեաւ ՚ի սպաս թըրուառ եղբարցըդ պարուն :
Ուր լրան ձայն հեծութեան , փութաւ և երթ անխափան ,
Գերոյն լիցիս գերեկից , վըշտատեսին լեր դարման .

Թող ցաւեսցէ քեզ ուժդին ... Զինչըս քոյին բաժանեաւ ,
Ազքատ լիցիս և տընանկ :

Եւ մեծացար գու ահա .

Դէմք քոյին պարզ և համբոյր՝ լիցին շարին ահաւոր .

Եւ քոյ խըրասպ վերիվայր զիցեն զաշխարհ ընդհանուր .

Երկի ծագաց 'ի միւս ծագ հընչեսցի ձայնըդ զօրեղ .

Եւ ահաւոր քան ըզշանթից ճայթեսցին բանք ահեղ .

Մարդարէից 'ի գըլուխս շարագործաց և պըղծոց :

Ամենայն այր անօրէն՝ կոր 'ի գըլուխս սըրտիւ խոց

Հարկանիցի զդողանի Տեսանողիդ առաջի ...

Ա.յլ գիտեա քաջ, Մարդարէ անարդ յիւրում գաւառի .

Վասն արութեանց սըրբագործ , աշխարհ ըզքեղ զըրպարտէ ,
Եւ գաւագիր աշակերտ մատնել ըզքեղ պատրաստ է :

Փարիսեցին կեղծաւոր պըսակ 'ի փշոց անկանի .

Եւ քարշեցեն զքեղ 'ի դատ պըրետորին յատենի :

Անդ խաղասցեն շուրջ ըզքեն , իբր զհայհոյշիւ օրինաց ,

Եւ խառնաղաննն դոյշեցէ , 'ի վրէժ քինու մոլեխանձ ,

« ի խաչ , ի խաչ » : Դատաւորն՝ առ երկիւղէ 'ւ առ 'ի շահ ,

Զարչարալից դատապարտ՝ ըզքեղ տացէ առ 'ի մահ :

Նախատակոծ մեռցիս դու , 'ի ձեռն դահճաց մահախոց ,

Զերդ թըշնամի մարդկութեան , կամ որպէս այր շարագործ :

Անցցեն տարիք . . . Ա.յլ զօրեղ սերմըն յաւանդ .

Տըւեալդ յերկիր արդաւանդ՝

Բուսցի 'ի վեր 'ի ժամուն ,

Եւ աճեցեալ , բերցէ հարիւր ընդ միոյն . . .

Յայնժամ և դու յարնիցես . աշխարհ ըզքեղ յիշեսցէ ,

Եւ ըզբաղդ քոյ չարակիր արտասուալից ողբասցէ .

Ի միտ առցէ , թէ քանի ճենճերեցար մեծ սիրով ,

Եւ որպիսի ողջակէզ մատեար նոցա , արեամբ քով :

Դատապարտիդ կանգնեսցին խորանք սեղանք փառաւորք ,

Եւ պըսակիդ փըշեղէն՝ երկիր պագցեն թագաւորք :

Տօնք արեկանք տօնեսցին ,

Համբոյքը սիրոյ խառնեսցին

Եղբայրական 'ի սըրտէ ,

Ընկեր ցընկեր ձայն տացցէ .

« Հրաշք 'ի վեր քան ըզհրաշս են համբուն ,

Վարդապետ մեր՝ էառ ինքնին թարուրիւն :

Ա. Պորովառապետ . Առա կենանի հեղինակ :

Թարգ . Հ . Ք . Ք .